21. 06. Արտադրամ է նշել

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի 7-րդ <<բ>> դասարանի ղեկավարի հաշվետվություն

Դասղեկ ՝ Ն. Գագինյան

1.2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել են ուսումնադաստիարակչական հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
  - Ամրացրել ենք փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
  - Աշակերտների մեջ խորացրել ենք սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել ենք աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
  - Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
  - Դաստիարակել ենք հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
  - Կարևորել ենք անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Քաջալերել ենք աշակերտներին , խրախուսել նրանց ձեռքբերումները և շտկել բացթողումները:
- Կազմակերպել ենք ինքնազարգացման գործնական աշխատանքներ:
- Դասարանում ապահովել ենք խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպել ենք միջոցառումներ , էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանքներ:
  - Ձևավորել ենք հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր, անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու:
  - Կատարել դասալսումներ ,ծնողական ժողովներ,ուստարվա ընթացքում ամուր ենք պահել աշակերտ-ծնող-դպրոց կապը:

- Կատարվել են թեմատիկ դասղեկական ժամեր,լրացվել է կանոնավոր կերպով Դասղեկի մատյանը

7-րդ <<բ>> դասարանում սովորում են 33 աշակերտներ՝ 23 տղա, 10 աղջիկ, 100 %առաջադիմություն ,որակը՝ 33 %:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների,մրցույթների:

Սեպտեմբերին 7-րդ <<բ>> դասարանի մի շարք աշակերտներ մասնակցեցին <<Երեք սրբության զավակներ>> առցանց նախաձեռնությանը,ստացան հավաստագրեր:

Դասարանը դասղեկի հետ անց է կացրել ամանորի միջոցառումը 6-9-րդ դասարանների համար: Այցելել են Ստեփանավանի Սահակ Սահակյանի անվան թանգարան:

Դասարանը անգլերենի ուսուցչուհու հետ անց են կացրել բաց դաս ԱՄՆ-ի նշանավոր նախագահների մասին:

7-րդ <<բ>> դասարանի լավ սովորող աշակերտները մասնակցել են նաև առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին, սպորտային միջոցառումներին,շաբաթօրյակներին:

Դասարանը կազմակերպված է, համախմբված, ակտիվ և պատասխանատու :

Դասարանում տիրում է խաղաղ մթնոլորտ, չնայած երբեմն կան տարաձայնություններ, , որոնք ստանում են արագ լուծում:Հաջորդ ուսումնական տարում ևս պետք է աշխատելակտիվ և գրանցել հաջողություններ: